# Հարգելի սպառող տեղեկացված եք արդյոք էլեկտրամատակարարող ընկերության Ձեր առջև ունեցած պարտավորությունների մասին

**Հարգելի սպառող**

**Համաձայն Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի N358Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների» (այսուհետ՝ կանոններ) էլեկտրամատակարարող ընկերությունը (այսուհետ՝ մատակարար) պարտավոր է սպառողին, նրա գրավոր դիմումի հիման վրա, վճարել տույժ՝ ծախսված էլեկտրաէներգիայի միջին ամսական արժեքի 50 % -ի չափով, բայց ոչ ավելի, քան 1500 դրամը, այն դեպքերում, երբ խախտել է՝**

ա) սպառողի էլեկտրամատակարարման պլանային ընդհատման համար սահմանված ժամկետը: Մասնավորապես՝ մատակարարը սպառողի էլեկտրամատակարարման պլանային ընդհատումը պետք է իրականացնի աշխատանքային օրերին՝ ժամը 9:00-ից 17:00-ն ընկած ժամանակահատվածում: Միևնույն ժամանակ չի թույլատրվում Հայաստանի Հանրապետության քաղաքային համայնքի բազմաբնակարան շենքերի և այն սպառողների էլեկտրամատակարարման պլանային ընդհատում, որոնց էլեկտրամատակարարումը նախատեսված է իրականացնել 6 (10) կՎ և բարձր լարման 1-ից ավելի առանձին օդային կամ մալուխային գծերով կայանի կամ ենթակայանի երկու հոծանային համակարգերից կամ սեկցիաներից (կանոններ 27-րդ կետ),

բ) էլեկտրամատակարարման արտապլանային ընդհատումից հետո սահմանված ժամկետում սպառողի էլեկտրամատակարարման վերականգնման ժամկետը: Մասնավորապես՝ մատակարարը սպառողի էլեկտրամատակարարումը պարտավոր է վերականգնել արտապլանային ընդհատման պահից ոչ ուշ, քան՝

- Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում՝ 2 ժամում, եթե սպառողի էլեկտրամատակարարումը նախատեսված է իրականացնել 6 (10) կՎ և բարձր լարման 1-ից ավելի առանձին օդային կամ մալուխային գծերով էլեկտրակայանի կամ ենթակայանի երկու հոծանային համակարգերից կամ սեկցիաներից, և 16 ժամում, եթե սպառողի

էլեկտրամատակարարումը նախատեսված է իրականացնել 6 (10) կՎ և բարձր լարման մեկ օդային (մալուխային) գծով,

- Հայաստանի Հանրապետության քաղաքային համայնքների՝ բազմաբնակարան շենքերի սպառողների համար՝ 2 ժամում, իսկ 0,4 կՎ և ցածր լարման այլ սպառողների համար՝ 8 ժամում,
- Հայաստանի Հանրապետության գյուղական համայնքների՝ բազմաբնակարան շենքերի սպառողների համար՝ 8 ժամում, իսկ 0,4 կՎ և ցածր լարման այլ սպառողների համար՝ 16 ժամում: (կանոնների 28-րդ կետ),

գ) առևտրային հաշվիչից անմիջապես հետո տեղադրված ավտոմատի անջատման դեպքում սպառողի էլեկտրամատակարարման վերականգնման համար նախատեսված ժամկետը: Մասնավորապես՝ մատակարարը սպառողի էլեկտրա-մատակարարումը պարտավոր է վերականգնել վերջինիս կողմից տեղեկացվելուց հետո ոչ ուշ, քան՝

- 2 ժամում՝ Հայաստանի Հանրապետության քաղաքային համայնքներում, եթե անջատումը տեղի է ունեցել սպասարկման օրվա ընթացքում.
- 4 ժամում՝ Հայաստանի Հանրապետության գյուղական համայնքներում, եթե անջատումը տեղի է ունեցել սպասարկման օրվա ընթացքում.
- 16 ժամում՝ Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում, եթե անջատումը տեղի է ունեցել սպասարկման օրերից դուրս: (կանոնների 29-րդ կետ):

Համաձայն կանոնների՝ սպառողի սպասարկման օրերը դա տարվա բոլոր օրերն են, բացառությամբ կիրակի օրերի, ժամը 9:00-ից մինչև 17:00-ը:

դ) վճարման համար հատկացված ժամկետի խախտման դեպքում մինչև սպառողի էլեկտրամատակարարումը դադարեցնելու ընթացակարգը: Մասնավորապես՝ մատակարարն իրավունք ունի դադարեցնել սպառողի էլեկտրամատակարարումը՝ առնվազն 3 օր առաջ հեռուստատեսությամբ կամ սպառողին հասու այլ ձևերով (հայտարարություն փակցնելով շքամուտքերում, փոստային բաժանմունքներում և այլն) զգուշացնելուց հետո: Զգուշացումը հեռուստատեսությամբ պետք է կատարվի հանրապետական նշանակության մետրային հեռարձակում ունեցող 2 հեռուստաալիքով 2-ական անգամ՝ 18:00-ից 20:00-ը և 20:00-ից 23:00-ն ընկած ժամանակահատվածներում (կանոնների 48-րդ կետ):

Եթե սպառողն ունի ամրագրված պայմանագրային վթարային կամ տեխնոլոգիական հզորություն, ապա մատակարարը կարող է սահմանափակել

սպառողի էլեկտրամատակարարումը մինչև պայմանագրում ամրագրված վթարային կամ տեխնոլոգիական հզորությունը՝ առնվազն 3 սպասարկման օր առաջ պայմանագրով սահմանված կարգով նրան զգուշացնելուց հետո, իսկ վթարային կամ տեխնոլոգիական հզորությունների ապահովման վերաբերյալ պայմանագրում նշված ժամկետներում չվճարելու դեպքում դադարեցնել սպառողի էլեկտրամատակա-րարումը՝ ժամկետների լրանալուց հետո, առնվազն 3 սպասարկման օր առաջ պայմանագրով սահմանված կարգով նրան կրկին զգուշացնելուց հետո (կանոնների 49-րդ կետ),

ե) վճարման համար հատկացված ժամկետի խախտման համար սպառողի էլեկտրամատակարարումը դադարեցնելուց հետո այն վերականգնելու համար սահմանված ժամկետը: Մասնավորապես՝ մատակարարը սպառողի էլեկտրամատակարարումը դադարեցնելուց հետո սպասարկման օրերին պարտավոր է այն վերականգնել ոչ ուշ, քան՝

- նույն օրը՝ մինչև ժամը 17:30-ը, եթե սպառողը պարտքի վճարումը հավաստող փաստաթուղթը մատակարարին է ներկայացրել մինչև տվյալ օրվա ժամը 14:00-ն, կամ մատակարարը նույն ժամկետում այլ աղբյուրներից ստացել է հավաստի տեղեկություններ, որ սպառողը կատարել է պարտքի վճարումը.
- հաջորդ օրը՝ մինչև ժամը 13:00-ն, եթե սպառողը պարտքի վճարումը հավաստող փաստաթուղթը մատակարարին է ներկայացրել տվյալ օրվա ժամը 14:00-ից մինչև 17:30-ը, կամ մատակարարը նույն ժամկետում այլ աղբյուրներից ստացել է հավաստի տեղեկություններ, որ սպառողը կատարել է պարտքի վճարումը (կանոնների 52-րդ կետ),

զ) սպառողի կողմից վճարման փաստաթղթում կամ հաշվում գրառումների սխալ հայտնաբերելու դեպքի վերաբերյալ ընթացակարգերը: Մասնավորապես՝ սպառողը վճարման փաստաթղթում կամ հաշվում գրառումների սխալ հայտնաբերելու դեպքում գրավոր դիմում է մատակարարին սխալն ուղղելու պահանջով: Մատակարարը սպառողի դիմումն ստանալու օրվանից՝ 5, իսկ լրացուցիչ ուսումնասիրությունների անհրաժեշտության դեպքում՝ 15 սպասարկման օրվա ընթացքում պարտավոր է ստուգել իր գրառումները և արդյունքների մասին գրավոր տեղեկացնել սպառողին (կանոնների 53-րդ և 54-րդ կետեր),

է) սպառողի կողմից առևտրային հաշվիչի սխալ աշխատանքի հայտնաբերման դեպքում սպառված էլեկտրաէներգիայի վերահաշվարկման կարգը: Մասնավորապես՝ եթե

խախտվել են սպառված էլեկտրաէներգիայի քանակության և արժեքի վերահաշվարկման, առևտրային հաշվառքի սարքի վերականգնման նպատակով սպառողի էլեկտրամատակարարման դադարեցման ժամկետներըՙ բնակչության դեպքումՙ մինչև 1 ժամ, իսկ ամրագրված պայմանագրային վթարային կամ տեխնոլոգիական հզորություն չունեցող այլ սպառողների դեպքումՙ մինչև 3 ժամ (կանոնների 12-րդ գլուխ),

ը) սպառողի պահանջով առևտրային հաշվառքի սարքերի աշխատանքի ճշտության ստուգման համար սահմանված ընթացակարգերը: Մասնավորապեսՙ եթե խախտվել են առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի ճշտության ստուգման համար նախատեսված ժամանակը, առևտրային հաշվառքի սարքի խախտում փաստելու դեպքում սպառողի սպառած էլեկտրաէներգիայի քանակության վերահաշվարկի պարտավորությունը (կանոնների 13-րդ գլուխ),

թ) սպառողի պահանջով առևտրային հաշվառքի սարքերի փոխարինման համար սահմանված ընթացակարգերը: Մասնավորապեսՙ եթե խախտվել են առևտրային հաշվառքի սարքի փոխարինման համար նախատեսված ժամկետները (կանոնների 14-րդ գլուխ),

ժ) սպառողի դիմում բողոքին պատասխանելու համար սահմանված ժամկետը: Մասնավորապեսՙ մատակարարը սպառողի դիմում-բողոքին պարտավոր է պատասխանել այն ստանալու պահից առնվազն 15 սպասարկման օրվա ընթացքում, եթե առանձին դեպքերի համար կանոններով այլ ժամկետ սահմանված չէ (կանոնների 75-րդ կետ):